ՀԱՂԲԱՏ

Հաղբատի վանքը գտնվում է Ալավերդի քաղաքից 6կմ արևելք, Դեբեդ գետի աջակողմյան բարձրադիր լեռնահարթակի վրա, համանուն գյուղում: Հատկապես Ժ-ԺԳ դդ. հանդիսանում էր Հայաստանի մեծահռչակ հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը: Քանիցս վերանորոգված վանքը շրջապատված է պարսպով: Համակառույցը ներառում է հետևյալ շինությունները՝ Ս. Նշան եկեղեցին, գավիթը, գրատուն-մատենադարանը, հյուսիսակողմի միջանցքը (փոքր գավիթը), արևելակողմի միջանցքը, Համազասպի ժամատունը, Ս. Գրիգոր և Ս. Աստվածածին եկեղեցիները, զանգակատունը, սեղանատունը, տնտեսական երկու շենքերը, խաչքարերով պատված երեք խորանավոր մատուռները և այլն: Վանքի կենտրոնական կառույցը *Ս. Նշան* եկեղեցին է: Լինելով հնագույնը՝ ժամանակի ընթացքում շրջապատվել է մյուս շինություններով: Արևելյան որմնամույթերը կցվել են բեմական խորանին և դարձել արևելյան ավանդատների արևմտյան պատ: Բարձրադիր գմբեթը գերիշխող դիրք ունի վանական համալիրի մեջ: Հյուսիսային և արևմտյան մուտքերով հաղորդակցվում է հյուսիսակողմի միջանցքի և գավթի հետ: Ունի երկու կրկնահարկ ավանդատներ՝ տեղադրված բեմական խորանի երկու կողմերում:

Եկեղեցու ճարտարապետական տարրերից մասնավորապես շքեղ են արևմտյան մուտքի դեկորատիվ կամարները ու որմնասյուները: Ներսում պահպանվում են բարձրարվեստ որմնանկարներ, որոնց մեջ հատկապես աչքի է ընկնում Խութլուբուղա Արծրունու՝ հասակով մեկ կանգնած պատկերը: Տպավորիչ են նաև արևելյան ճակատում տեղադրված կտիտորական քանդակները՝ մանրակերտը ձեռքերի մեջ, ինչպես Սանահնում, Անիում, Հառիճում և այլուր:

Եկեղեցու հյուսիսակողմի բացօթյա սրահի մեջ կա երկու փոքրիկ մատուռ, որոնց առջև կանգնեցված է մեծարվեստ խաչքար՝ խաչելության ավետարանական պատկերաքանդակներով:

Վանական շենքերի մեջ առավել ինքնատիպ է վիթխարածավալ ու փառահեղ *Մեծ գավիթ* ժամատունը: Հատակագիծն ունի անկանոն խաչաձև հորինվածք, որը Կյուրիկյանների՝ 1183 թ. գավթի հետ համատեղման ու վերակառուցման արդյունք է:[27] Արևմտյան թևն օժանդակված է հաստահեղույս զույգ սյուներով, որոնց կապող կոնստրուկցիան պսակված է խաչվող կամարներով, երդիկով: Կառուցվածքային այս առանձնահատկությունից ելնելով՝ ճարտարապետ Ս. Մնացականյանը գավիթը բնութագրում է որպես սինթեզված երևույթ: Հյուսիսարևելյան անկյունում մի ավանդատուն կա, իսկ հարավարևելյան անկյունում՝ երկու: Հարդարանքի միջոցներից աչքի են ընկնում հատկապես արևմտյան շքամուտքը և հյուսիսային ու հարավային թևերի պատուհանները: Ներսում՝ այդ թևերի արևելյան պատերին, ագուցված են բարձրարվեստ խաչքարեր:

Հաղբատի Ս. Նշան եկեղեցու ժամատունը կամ Մեծ գավիթը վանքի «ամենանշանավոր ճարտարապետական կառուցվածքն» է, «միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից մեկը» (Կ. Ղ.): Այն կառուցել է վանահայր Հովհաննես Խաչենցին ԺԳդ. առաջին-երկրորդ տասնամյակներում:

---

[27] *С.Х. Мнацаканян*, Архитектура Армянских притворов, Ереван,1952, с. 79-80; *Կ. Ղաֆադարյան*, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ 26:

Վանքի աչքի ընկնող երրորդ շենքը Համազասպ վանահոր կառուցած և նրա անունով հայտնի *ժամատունն* է: Հորինվածքով պատկանում է չորս սյունավորների տիպին, սակայն տարբերվում է իր նմանօրինակներից արտակարգ մեծ չափերով և այդ առումով համարվում է միջնադարյան Հայաստանի ամենամեծ շինությունը (մոտ 400 քմ): Տաճիքի կառուցվածքային հիմքը կազմում են սյուներից բարձրացող և կենտրոնում խաչվող կամարները: Մյուս շինությունների նման՝ այս գավիթը ևս զուսպ է իր հարդարանքներով և ձևավորվել է միայն մուտքը՝ ուղղանկյուն շրջանակով, դեկորատիվ կամարով ու սյուներով: Կառուցվել է ԺԳ դ. կեսերին:

Ժամատանը արևելքից կցված է համեմատաբար բարձր հատակով փոքր մատուռը, որն աղոթարան-բեմ է հանդիսանում:

Կառուցվածքով հետաքրքիր է նաև *գրատունը:* Երկուական ցածրադիր որմնասյուները յուրաքանչյուր պատի վրա պահում են տանիքի միաթռիչք կամարները, որոնց խաչումից առաջացած կենտրոնի երդիկավոր բացվածքը պսակված է գեղեցիկ, նույնպես երդիկավոր գմբեթով: Պատերի մեջ գրապահոցի որմնախորշեր են պատրաստված: Հիմնադրվել է ԺԱ դ. և էապես վերակառուցվել ԺԳ դ.: Գրատնից արևելք, միջանցքի տանիքի վրա կանգնեցված է փոքր մատուռ (ԺԳ դ.):

Ս. Նշան եկեղեցու գավթի հյուսիսակողմում գտնվում է *Ս. Գրիգոր* (1025 թ.) թաղածածկ մատուռը, որը 1211 թ. վերակառուցման ժամանակ ստացել է խաչաձև հատակագիծ՝ պաշտամունքի 7 խորաններով: Հարավակողմում, գավթի հարավային թևերին կից՝ *Խաթունաշեն Ս. Աստվածածին* եկեղեցին է (ԺԳ դ.): Վերջինս չորս ավանդատնով, փոքրածավալ, գմբեթակիր շինություն է: Մուտքը շքեղ հարդարված է զարդաքանդակ ուղղանկյուն շրջանակով, կամարով և որմնասյուներով:

Հայկական միջնադարյան ճարտարապետության եզակի երևույթներից է վանքի *եռահարկ զանգակատունը*, որը տեղադրված է համախումբ կոմպլեքսից մի փոքր արևելք, առանձնացած, մի առավել հին շինության տեղում: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Հովհաննես Սարկավագին թաղել են Մեծ (Ս. Նշան) եկեղեցուց արևելք, «առ դուրս փոքրագոյն եկեղեցվոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համազասպ և շինեաց հրաշալի շինուած, ուր զզանգակսն կախէին՝ յարմարեալ ի նմին և եկեղեցիս»:[28] Սլացիկ ծավալով, սյունազարդ ռոտոնդայով շենքին յուրահատուկ գրավչություն են հաղորդում առաջին հարկի բարձրությամբ արտաքին անկյունների որմնախորշերը, որոնց վերնամասն ավարտվում է ստալակտիտային համածույլ շարքերով: Առաջին հարկն ունի խաչաձև հատակագիծ՝ արևելյան թևի մեջ տեղադրված երկու ավանդատներով: Երկրորդ հարկը, արտաքուստ, ութանիստ է, իսկ ներքուստ՝ ուղղանկյուն, սակայն չորս անկյունների փոքրիկ ավանդատների շնորհիվ ներքին տարածությունը վերստացել է խաչաձև հորինվածք: Երկրորդ հարկում գեղեցիկ ձևավորված են պատուհանները՝ երկփեղկող սյուներով և երկթռիչք կամարներով: զանգակատունը 1245 թ. կառուցել է վանահայր Համազասպը: .

Ինքնատիպությամբ առանձնանում է նաև վանքի հյուսիսարևելյան կողմում պարսպակից *սեղանատունը:* Այստեղ ևս օգտագործված է խաչվող կամարների կառուցողական հնարանքը, ըստ որում շինության երկարավուն համաչափությունների պատճա-

---

[28] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 115:

ռով ճարտարապետը երկու ցածրադիր սյուներով երկայնքը բաժանել է հավասար մասերի և այդ սյուների վրա դրել ծածկի երկթռիչք կամարները, որոնք խաչվում են որմնասյուներին հանգչող կամարների հետ:

Երդիկավոր ցածրադիր գմբեթներից լուծվել է լուսավորման հիմնական խնդիրը: Այս տիպի սեղանատներ Հայաստանում ընդամենը երկուսն են, և Կ. Ղաֆադարյանը չի բացառում, որ սա ևս լինի ճարտարապետ Սինասի կառուցածը (1248 թ.):

Վանքի շրջափակ տարածքի հյուսիսարևմտյան թևում գտնվում են երեք փոքրիկ թաղածածկ մատուռներ՝ վրաները դրված գեղաքանդակ խաչքարերով: Դրանք Ուքանենց իշխանական տան տոհմական դամբարաններն են: Չնայած պարզ, հասարակ կառուցվածքին՝ ճակատային պատկերն ամբողջությամբ զարդարվել է հարուստ զարդաքանդակների ժապավեններով, իսկ վրադիր խաչքարերը ԺԳդ. սկզբի արվեստի սքանչելի ստեղծագործություններ են:

Կիսաշրջան աշտարակներով պարիսպը, որ շրջափակում է հիշյալ բոլոր շինություններն ընդարձակ բակով հանդերձ, իր վրա կրում է տարբեր ժամանակների կառուցողական հետքեր: Մասնագետների կարծիքով, այն գոյություն է ունեցել ԺԱ դարում[29] և բազմիցս նորոգվել ու վերակառուցվել է հետագայում:

Վանքի այս հիմնական խմբից արևելք գործում է ջրառատ աղբյուրի շենքը: Դա երկարավուն, թաղածածկ շինություն է՝ երկլանջ տանիքով: Ճակատային հատվածը երկու զանգվածային սյուներով բաժանված է կամարներով պսակված երեք մասերի: Կառուցել է վանքի առաջնորդ Հովհաննեսը 1258 թ.՝ սեփական միջոցներով:

Գյուղի տարածքում են գտնվում նաև *Ս. Սիոն, Առաջադեմ* մատուռները, *Ս. Զորավար* և *Կուսանաց անապատ* եկեղեցիները: Առաջինը կիսամշակ քարերով կառուցված փոքրիկ շինություն է: Ներկայումս պահպանվում է միայն բեմական խորանի հատվածը:

Ս. Զորավարը կառուցվել է գյուղի հարավային ծորաեզրում, հին գերեզմանատան մեջ և ակներևաբար ծառայել որպես վկայարան:

Ճարտարապետական ձևերով ավելի հետաքրքիր է գյուղից դուրս, արևելակողմում գտնվող գմբեթակիր Կուսանաց անապատը: Ներքին տարածությունը՝ չորս անկյուններում ավանդատների տեղադրության շնորհիվ, հատակագծում ստացել է խաչաձևություն: Մուտքը զարդաքանդակված է ուղղանկյուն շրջանակով, դեկորատիվ կամարով և որմնասյուներով: Գմբեթի ութանիստ թմբուկի նիստերը կցման տեղերում հարդարված են դեկորատիվ որմնասյուներով, որոնք միմյանց հետ կապվում են նիստերը պսակող կամարների միջոցով: Կ. Ղաֆադարյանը կարծում է, որ Կուսանաց վանք այստեղ չի եղել, և այս անունը թյուրիմացության արդյունք է: Եկեղեցու պատին զետեղված արձանագրության մեջ օգտագործված Տիրամոր հիշատակությունը նա առաջարկում է ընդունել որպես եկեղեցու իսկական անվանում:

Հաղբատի վանքի պատմությունը մատենագրական սկզբնաղբյուրներում ներկայացված է Սանահնի հետ միասին: Դրա պատճառը նշանավոր վանքերի մոտիկությունն է տարածքային և ժամանակի առումներով: Պատմիչներից վանքի հիմնադրմանը ժամանակով ամենից մոտ կանգնած Ասողիկը (Ստեփանոս Տարոնացի) անորոշ կարգով տարեգրում է Սևորդյաց աշխարհում Աշոտ Ողորմածի օրոք Սանահնի և Հաղբատի

[29] *Կ. Ղաֆադարյան*, Հաղբատ, էջ 78:

վանքերը շինելու փաստը: Պատմագիրներն ու ժամանակագիրները բազմիցս անդրադարձել են այս կենտրոնների կառուցման խնդիրներին՝ հաճախ տեղիք տալով իրարամերժ կարծիքների: Այս առթիվ միակ հիմնավոր տեղեկությունը հայտնել է Սամուել Անեցին. «Ի ՆԺԶ թվին շինեցաւ Հաղբատ, և Սանահինն՝ ԺԱ ամաւ առաջ քան զՀաղբատ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհւոյն՝ ի կնոջ Աշոտոյ Շահնշահի»:[30]

Պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը, հանգամանորեն համադրելով ու քննարկելով պատմական հակասական հաղորդումները, հետազոտողների թեր ու դեմ կարծիքները, հանգել է այն վստահ հետևության, որ Սանահնի վանքը (իմա՝ Ամենափրկիչ եկեղեցին) կառուցվել է 966/67 թթ., իսկ 10 տարի անց՝ 976/77 թթ. հիմնադրվել է Հաղբատի Ս. Նշան եկեղեցին՝ Հայոց թագավոր Աշոտ Ողորմածի հովանավորությամբ, Խոսրովանուշ թագուհու նախաձեռնությամբ՝ իրենց որդիներ Գուրգենի (Կյուրիկէ) և Սմբատի արևշատության բաղձանքով, ավելի ստույգ՝ կարևորելով ժամանակի պահանջը:

Հայ արվեստի խոշորագույն կոթողի (Լեռ) կառուցումը, համաձայն իր իսկ թմբուկի արձանագրության, ամբողջովին ավարտվել է 991 թ.: Այս տաճարի արևելյան պատին պատկերված են Գուրգենը՝ իշխանական գդակով, և Սմբատը՝ Գագիկի պես, թագավորական չալմայով:

Տաճարի խոսուն մանրապատճենը ձեռքներին այս քանդակը պատրաստված ու տեղադրված պետք է լինի 989 թ. վերջում, ամենաուշը՝ 990 թ. սկզբում, երբ դեռ Սմբատ Բ-ն կենդանի էր:

Հաղբատավանքի առաջին վանահայրն էր Սիմեոնը, որը եկել էր Սանահնից: Նա Սանահնում հայտնի էր որպես գրիչ և Հովհաննես առաջնորդի մերձավորներից էր: Ընդօրինակել է Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» ձեռագիրը:

Առաջին վանահայրերից հայտնի է նաև Տիրանունը, որի անունից փորագրվել է 991 թվականի շինարարական արձանագրությունը: Կ. Ղաֆադարյանը սրան համարում է Սիմեոնի աթոռակից:

Ժ դարի վերջերին և, հատկապես, ԺԱ դարում Կյուրիկյան թագավորությունը զգալիորեն ուժեղանում է: Վանքում ծավալվում են շինարարական, մասնավորապես՝ նորոգչական լայն աշխատանքներ: ԺԱ դարի վերջում, Սարգիս վանահոր ժամանակ, Հաղբատը դառնում է եպիսկոպոսանիստ: Սակայն ԺԲ դարում վանքը տուժում է սելջուկյան ցեղերի արշավանքից, իսկ դարի վերջերին՝ ահեղ երկրաշարժից:

ԺԲ դ. վերջերին, երբ Հյուսիսային Հայաստանն ազատագրվեց սելջուկներից, Հաղբատի վանքի համար, Զաքարյանների-Արծրունիների հովանավորությամբ սկսվեց անանախադեպ բարգավաճման մի նոր շրջան, որը շարունակվեց մինչև ԺԳ դ. ավարտը: Այս ընթացքում վանահայրերից առանձնապես աչքի ընկավ Անի քաղաքից եկած Համազասպ եպիսկոպոսը, որի մեծագործ կերտվածքն է վանքի ամենաընդարձակ շենքը՝ նրա անունը կրող ժամատունը:

Հաղբատավանքը Հայաստանի ամենաերկարակյաց գործող հոգևոր ու մշակութային օջախներից մեկն է: Նրա տարեգրությունը 1000 տարուց ավելին է: Պատմական այս հսկայական ժամանակաշրջանի մշակութային, քաղաքական, տնտեսական զարգա-

---

[30] Սամուելի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 100:

ցումներն իրենց արտացոլումն են գտել վանքի պատերին փորագրված վիմագիր հիշատակություններում, որոնք կարևոր սկզբնաղբյուր են Հայաստանի միջնադարյան պատմության բազմապիսի հարցերի ուսումնասիրության համար:

ԿԱՅԱՆ ԲԵՐԴ: Գտնվում է Հաղբատավանքից մոտ 2 կմ արևմուտք՝ Որնակ գյուղից հյուսիս, հրվանդանի վրա:

Կառուցվել է 1233 թվականին, որպես վանքի ապավեն օտար հարձակումների ժամանակ: Ամրոցի պատկանելիության կապակցությամբ Սանահնի և Հաղբատի միջև ծագած վեճի պատճառով՝ այն քանդել են թաթարները 1236 թ., սակայն շարունակել է օգտագործվել հետագա դարերում:

Ներկայումս կիսավեր է: Պահպանվել են բոլորաձև աշտարակներից մի քանիսի և պարապետների վթարված հատվածները:

Կիսավեր է նաև բերդամիջի եկեղեցին: Գմբեթակիր, ոչ մեծ չափերի շինություն է՝ կառուցված սրբատաշ բազալտով: Նորոգվել է ԺԹ դարում, բայց անտերության հետևանքով հասել է ծայրահեղ քայքայման: Մասնագիտական գրականության մեջ եկեղեցին հայտնի է *Դրսեվանք* անունով: